ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
06101708

REPUBLIC OF ARMENIA
ANUSHAVAN COMMUNITY OF
SHIRAK REGION

ՀՀ Շիրակի մարզ գ.Անուշավան. Փ1. շենք 1
☏ 0244 5-91-91, բջջ. 077761040, 093 39-01-54
Էլ.փոստ՝ aanushavani.gyuxapetaran@mail.ru

N 41 «22» 03 2016թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն՝ Հ. Սիմոնյանին

Հարգելի պարոն Սիմոնյան

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ձեզ ենք ներկայացնում Անուշավան համայնքի ավագանու 2016թվականի մարտի 14-ի թիվ 2 նիստի թիվ 5-Ա, 6-Ա, 7-Ա, 8-Ա և 9-Ա որոշումները:

Առդիր 7 թերթ

Անուշավան գյուղական
համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3014-16
22 03 2016թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

14 մարտի 2016թվականի — Անուշավան համայնք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 14 ՄԱՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 5-րդ մասով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 14-ի թիվ 2 նիստի օրակարգը:

Նիստի օրակարգը

1 Հաղորդում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սելավատար առուների մաքրման աշխատանքների վերաբերյալ

Զեկ. Համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

2 Հաղորդում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2016թ. ապրիլի 1-ից աշխատանքները սկսելու նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ.

Զեկ. ՆՈՒՀ տնօրեն Օ. Սարոյան

3 2009թվականի հոկտեմբերի 2-ի <<Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի անդամ հաստատելու մասին>> թիվ 35-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում Անուշավանի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից անդամ հաստատելու մասին:

Զեկ. Համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

4 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2014թվականի մարտի 14-ի թիվ 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Զեկ. Համայնքի ղեկավար` Ե. Հակոբյան

5 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2013թվականի նոյեմբերի 11 թիվ 39-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Զեկ. Համայնքի ղեկավար` Ե. Հակոբյան

6 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, դիմումների համաձայն, դրամական օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Համայնքի ղեկավար` Ե. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

| | | |
|---|---|---|
| Մ. Բայադյան | կողմ | |
| Ա. Կարոյան | կողմ | |
| Ռ. Հակոբյան | կողմ | |
| Ռ. Հարությունյան | կողմ | |
| Ա. Վարդանյան | կողմ | |
| Գ. Վարդանյան | կողմ | |
| Ա. Ստեփանոսյան | կողմ | |

Անուշավան համայնքի ղեկավար Ե. Հակոբյան

14 մարտի 2016թվական
գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6-Ա

14 մարտի 2016թվական — Անուշավան համայնք

2009ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի <<ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԴԱՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 12 նոյեմբերի 2015թ. N 956-Ն հրամանով՝

Յայաստանի Յանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2009 թվականի հոկտեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան գյուղի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի անդամ հաստատելու մասին>> թիվ 35-Ա որոշումը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդի անդամ հաստատել համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյանին՝ երեք տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

Մ. Բայադյան կողմ
Ա. Կարոյան կողմ
Ռ. Հակոբյան կողմ
Ռ. Յարությունյան կողմ
Ա. Վարդանյան կողմ
Գ. Վարդանյան կողմ
Ա. Ստեփանոսյան կողմ

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
14 մարտի 2016թվական
գ. Անուշավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

14 մարտի 2016թվական | Անուշավան համայնք

## ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՅԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Յայաստանի Յանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2014թվականի մարտի 14-ի <Անուշավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին> թիվ 12-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Երրորդ տողի <<Ղարիբ Ղահրամանյան >> բառերը փոխարինել <<Մանե Բայադյան >> բառերով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

| | | |
|---|---|---|
| Մ. Բայադյան | կողմ | [signature] |
| Ա. Կարոյան | կողմ | [signature] |
| Ռ. Հակոբյան | կողմ | [signature] |
| Ռ. Յարությունյան | կողմ | [signature] |
| Ա. Վարդանյան | կողմ | [signature] |
| Գ. Վարդանյան | կողմ | [signature] |
| Ա. Ստեփանոսյան | կողմ | [signature] |

Անուշավան համայնքի ղեկավար՝ [signature] Ե. Հակոբյան

14 մարտի 2016թվական

ք. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8-Ա

14 մարտի 2016թվական — Անուշավան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին 24 փետրվարի 2011թվականի թիվ 164-Ն որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2013թվականի նոյեմբերի 11-ի <Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և հանձնաժողովի անհատական կազմից հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար սահմանելու մասին> թիվ 39-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Երկրորդ տողի <<Արաքսի Ալեքսանյան>> բառերը փոխարինել <<Աննա Աղաբաբյան>> բառերով:
2. Չորրորդ տողի <<Անահիտ Չոփիկյան>> բառերը փոխարինել <<Ռոզա Հակոբյան>> բառերով

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

| | | |
|---|---|---|
| Մ. Բայաղյան | կողմ | [signature] |
| Ա. Կարոյան | կողմ | [signature] |
| Ռ. Հակոբյան | կողմ | [signature] |
| Ռ. Հարությունյան | կողմ | [signature] |
| Ա. Վարդանյան | կողմ | [signature] |
| Գ. Վարդանյան | կողմ | [signature] |
| Ա. Ստեփանյան | կողմ | [signature] |

Անուշավան համայնքի ղեկավար՝ [signature] Ե. Հակոբյան

14 մարտի 2016թվական
գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

14 Մարտի 2016թվական Անուշավան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 5 -րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, դիմումների համաձայն, Անուշավանի համայնքային բյուջեից հատկացնել 450 000/չորս հարյուր հիսուն հազար/ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

| | | |
|---|---|---|
| Մ. Բայադյան | կողմ | |
| Ա. Կարոյան | կողմ | |
| Ռ. Հակոբյան | կողմ | |
| Ռ. Հարությունյան | կողմ | |
| Ս. Վարդանյան | կողմ | |
| Գ. Վարդանյան | կողմ | |
| Ա. Տեփանոսյան | կողմ | |

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
14 մարտի 2016թվական
գ. Անուշավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների

1. Մարտիրոսյան Աշոտ Վալիկոյի - 150 000դրամ /թաղման ծախս/
2. Արշակյան Մարինե Հենրիկի - 150 000դրամ /թաղման ծախս/
3. Դավթյան Ջեմմա Ռուբենի - 50 000դրամ
4. Բուդաղյան Արտաշես Ժորժիկի - 50 000դրամ
5. Հայրապետյան Մարինե Իշխանի - 50 000դրամ

Ընդամենը - 450 000դրամ

Անուշավան համայնքի ղեկավար Ե. Հակոբյան